

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

(ԱՐՄԷՆԵՐ ԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ)

Այս ապստամբութիւնները Հայաստանի ներքին քաղաքական դուրս
բարձրացնելու: Ծիլդ է, Հայաստանի ներքին ժամանակաւորապէս ունեցան որոշ
յաջողութիւններ, որովհետեւ Սուլայիլուլիումին խիստ տարուած էր Գասպա-
ների և նրանց ցեղակից ժողովուրդների ապստամբութիւնները ճնշելու գոր-
ծով, որոնք յարձակուել ու մտել էին Հաթիան կայսրութեան հիւսիսային նա-
հանգները և մինչև անգամ դրանք Սատտուսա մայրաքաղաքը ու կողոպտել:
Այս ապստամբութեան ժամանակ հանգիստ չէին մնացել նաև Ազդիները (Հայա-
ստանի ստորադաս թագաւորութիւն), որոնք նմանապէս յարձակուել ու մը-
տել էին Հաթիան պետութեան «Կերին երկիր» (Haut pays) կոչուած մասը: Իսկ
Կարաննիս արչաւում էր Հաթիան սրբալայրերից Սամուխ քաղաքի վրայ և
կործանում ու աւերում էր այն: Ինչպէս տեսնում ենք, Սուլայիլուլիումին բո-
տիպում Կատերազմ էր մղում մի քանի ճակատների վրայ: Բայց նա փորձը-
ւած և քաջ հրամանատար էր, որն իր հօր՝ Դուտիալիասի կենդանութեան ժա-
մանակ մասնակցել ու թրծուել էր նրա մղած Կատերազմներում: Սուլայիլուլ-
իումին անմիջապէս իր բանակներով գալիս ու հասնում է Սամուխ և Հայա-
ստանի ներքին մի լաւ ջարդ տալուց յետոյ նրանց ետ է քշում ու քաղաքն ազա-
տաւորում և ապա՝ սկսում վերաշինել: Բայց ճիլդ այդ պահին պետութեան հա-
րաւարեւելեան սահմանների վրայ մի նոր ապստամբութիւն ծայր է առնում:
Հաթիան բանակը դիմում է դէպի այնտեղ: Կարաննիս ուզում է այս անգամ ևս
առիթից օգուտ քաղել և երրորդ արչաւանքն է կատարում Հաթիի հիւսիսային
նահանգների վրայ: Բայց չուտով Սուլայիլուլիումին հարաւային ապստամբ-
ների հետ հաշիւները վերջացնելով հասնում է Հայաստանի ներքին, որոնց ետ
է չարտում ու ազատում երկրի դրաւում մասերը:

Այնուհետև, Սուլայիլուլիումին մօտ տասը տարի խաղաղութեամբ
թագաւորում է, Հայաստան իրեն հպատակ վասսալ թագաւորութիւն դարձրած:

Պատմագէտները յայտնում են, որ այդ տասը տարիների ընթացքում
Հաթիան արքան կարողացել է այն աստիճան հզօրանալ ու ամրապնդել իր եր-
կիրը և իշխանութիւնը, որ սարսափ է ազդել Հայաստանի ներքին:

Կարաննիսին յաջորդում է Հուկկանաս թագաւորը: Ըստ ոմանց՝ Սուլ-
այիլուլիումին կարողանում է դիւանագիտական ճանապարհով Հայաստանի թա-
գաւորին զինակից ու դաշնակից դարձնել (Ադոնց), իսկ ըստ ուրիշների կար-
ծիքին՝ Հայաստանի թագաւորը երկարատեւ կռիւներից յետոյ տեղի է տալիս
Թշնամու դերազանց ուժի առջև ու հարկադրուած հաշտութիւն է կնքում Հա-
թիի թագաւորի հետ մի շարք խիստ աննպաստ պայմաններով (Քասունի):

Բոլոր դէպքերում էլ Հայաստան հպատակ է ու կամակատար: Գուցէ և
աւելի անմխիթար, քան հպատակն ու կամակատարը: Արդարեւ, Սուլայիլուլ-
իումին Սատտուսա հրաւիրելով Հուկկանասին իր աղջիկներից մէկը իրրեւ թա-
գուհի կնութեան է տալիս նրան, կարգադրելով որ Հայաստանի թագաւորի միւս

կիները, որոնց մէջ էր նաև Հովակնայի մէկ քոյրը, պահուեն իրեն հարճեր : Ապա, Հայասայի թագաւորը իրաւունք չունէր իր թղթակցութիւնների մէջ իրեն Հաթեան մեծ արքային «Ներայի» կոչել և ոչ էլ «Արքայից արքայ» տիտղոսը գործածել : Տեսնում ենք, որ Հայասայի թագաւորը կամայ թէ ակամայ դատապարտուել էր Հաթեան կայսրութեան նկատմամբ վասսալական դիրք ընդունելու :

Բայց աւելի ստորնացուցիչ բնոյթ ունեն դաշնագրի կէտերը, որոնք տարակոյսի տեղ չեն թողնում Հայասացիների հպատակութեան փաստի վերաբերմամբ : Ահա դաշնագրութեան այդ կէտերը մէջբերում ենք Աղոնցի զբօսից թարգմանելով :

Ուրեմն, Սուլայիլուլիումին իր քրոջ (ըստ ոմանց՝ աղջիկներից մէկին) ամուսնացնում է Հովակնայի հետ և այդ առթիւ հետաքրքրական խորհուրդներ է տալիս նրան : Խօսում է Հաթերի (= Հիթիթների) թագաւորը :

«Իմ քոյրը, որ ես քեզ տուեցի որպէս կին, նա ինքն էլ ունի քոյրեր և քոյրացուներ (խորթ քոյր) : Նրանք էլ քեզ բարեկամացան քո ամուսնութեամբ : Արդարև, Հատտերի երկրում կայ մի այսպիսի օրէնք. ձեռք մի՛ տուր քոյրերին և մերձաւոր ազգականների (հօրաքրոջ, մօրաքրոջ) դատերին : Դա թոյլատրուած չէ : Նա, ով թոյլ է տալիս իրեն նման մի արարք Հատտերի երկրում, նա չի ապրի, կը մահացուի :

Քանի որ ձեռք երկիրը քիչ է քաղաքակրթուած, ուստի՝ դուք սովոր էք ձեր քոյրերի և ազգականուհիների հետ ամուսնանալ : Հատտի երկրում նման մի բան չի թոյլատրում : Եթէ մի օր քո կնոջ քոյրերից, քոյրացուներից կամ ազգականուհիներից մէկը դայ քեզ մօտ, մատուցիր նրան խմիչք և ուտելիք : Կերէք, խմեցէք և ուրախացէք : Բայց նրան ձեռք չտաս : Դա թոյլատրուած չէ, դա մահացու մի հանգամանք է : Նման մի բան մի փորձիր ոչ ինքնարեւարար, ոչ էլ որեւէ մէկի խորհրդով : Մի՛ անի այն, և դա թող քեզ արգելուած լինի երգումով :

Խիստ զգոյշ եղիր պալատի կանանց հանդէպ, ինչպիսի կնոջ էլ վերաբերուի, լինի ազատ թէ ստրուկ, մի՛ մօտեցիր նրան, մի՛ խօսի :

Նրա հետ զգոյշ եղիր : Երբ պալատի մի կին առնում է քո ճանապարհից, կանգնիր և ետ դարձիր նրանից : Հետեւեալ դէպքը պալատի մի կնոջ առթիւ, թող մի դաս լինի քեզ համար» :

Ո՞վ էր Մարիյաս և ինչո՞ւ մահացու նա : Նա չէ՞ր որ հանդիպեց պալատի մի ստրկուհուն ու չնայե՞ց նրան : Եւ իմ հայրը՝ Արեղակը, նկատելով այն մի լուսամուտից, նրան բարկութեամբ չասա՞ց. — Ինչո՞ւ դու նայեցիր այդ կնոջ. — Եւ Մարիյաս մահ գտաւ այդ սխալի համար :

Մի հանգամանք, որ մահուան է ենթարկում մի մարդու, արժէ որ դու զգոյշ լինես :

Երբ դու վերադառնաս Հայասա, ձեռք մի՛ տուր ոչ քո եղբոր կանանց, ոչ էլ քոյրերին : Հատտիում թոյլատրուած չէ դա : Երբ պալատ հասնես, մի՛ արա այն բանը, որ արգելուած է : Պէտք չէ երբեք դու մի նոր կին առնես Աղզիի երկրից, և եթէ դու որեւէ մէկին առնես, նրան կին մի դարձրու, այլ հարճ :

Ետ վերցրու քո աղջկան, որ դու տուել էիր Մարիյանային և տուր նրա եղբորը : Եւ այն մարդկանց, որ զերեւմարել էին Հատտիից Հայասա՝ ետ ուղարկիր նրանց, վերադարձրու նոյնպէս Հատտի զինուորներին : Այն որ չի տալիս

գերիններին և պահում է նրանց, դու կ'ասես նրան բարեկամութեամբ:— Ինչո՞ւ չես վերադարձնում»:

Սոյն պայմանագրի վերջում նշուած կէտերը խօսում են Հատտի ու Հայասայի միջև փոխադարձ օգնութեան մասին:

«Եթէ դու Հայասայի մարդիկդ, ապագայում ինձ պաշտպանէք բարեկամարար, ես էլ նոյնպէս կը պաշտպանեմ ձեզ, Հայասայի մարդկանցդ. կը պաշտպանեմ նոյնպէս Հայասա երկիրը: Եւ դուք ձեզ հաւատարիմ պահէք և պաշտպանեցէք Արեգակին ու Հատտի մարդկանց, ես էլ ինքս՝ Արեգակս ձեզ կը պաշտպանեմ: Իսկ եթէ դուք ինձ վատութիւն պատճառէք, ես էլ, Արեգակս, ձեզ վատութիւն կ'անեմ, և ես՝ Արեգակս կը դրժեմ աստուածների առջև արած երդումս»⁶:

Տեսնում ենք, որ դաշնագրի ողին, ոճը և առաջ քաշած հարցերը բաւական խօսուուն վկայութիւն են տալիս երկու պետութիւնների միմեանց նկատմամբ ունեցած դիրքերի և յարաբերութիւնների մասին: Բայց պատմադէտները այս տեսակէտից տարբեր կարծիքներ ու մեկնաբանութիւններ են տուել: Օրինակ, Ադոնցն այս համաձայնագիրը, իրաւական բնոյթի տեսակէտից, համարում է դաշնագրային և ո՛չ վստաւական, ինչպէս սխալմամբ կարծուել է: Ադոնցն ընկնում է մոլորութեան մէջ, երբ չեւտում է, թէ հակառակ գրութեան ոճին, որով խօսում է Սուպպիլուլիումին Հայասայի թագաւորի հետ, վարում է հաւասարը հաւասարին: Դաշնագրութեան մէջ ոչինչ կայ, որ առաւելութիւն տար Հատտերի թագաւորին: Ոչ մի պայման, որ վերապահած լինէր որեւէ գերազանցութիւն և առաւելութիւն: Ամէն ինչ փոխադարձ է: Ոչ մի բան ցոյց չի տալիս, որ Հայասան ճնշուած է և կամ շնորհակալութեան պարտական Հատտերին: Ընդհակառակը, Սուպպիլուլիումին չի ծածկում, որ Հայասան տակաւին իր ձեռքումն է պահում Հատտերից վերցրած հողերը և տարուած գերիները: Դաշնագրութեան պայմաններից մէկը համաձայնեցնում է Հուկկանան վերադարձնել գերիները եւ ետ քաշուել Հատտերի հողերից:

Ադոնցն որպէս մեծ պատմաբան մեծ մոլորութեան մէջ է այս կէտերի շուրջ, որ Հայասացիների վարկը բարձրացնելու կամ նրանց պաշտպանելու իր միտումը ակնյայտ է դարձնում: Մենք չենք կարող համաձայնել այս կամայական մեկնաբանութեան հետ: Նախ՝ դաշնագրութեան ոճին Ադոնցը թէ՛ և չի ուզում մեծ կարեւորութիւն տալ, բայց տեսնում ենք, որ ամէն ինչ նրանից կախում ունի: Թւում է ընթերցողին, որ Հոտմէական դոռոգ ու ամբարտաւան կայսրներից մէկն է խօսում պարտուած բարբարոսների մի ներկայացուցչի հետ, երբ Սուպպիլուլիումին չարտում է Հուկկանայի երեսին. «Բայց քանի որ ձեր երկիրը քիչ է քաղաքակրթուած...»: Եւ այնուհետեւ սպառնալիքների մի ամբողջ շարան...: Բայց միթէ՞ բացայայտօրէն չի երևում, որ իրերի բախտին ու տնօրինութեան վրայ չի իշխում Սուպպիլուլիումի կամքը, երբ նա է կարգադրում, նա է մճռում, նա է հրամայում: Նոյնիսկ Հուկկանային հարկադրում է իր «քոյր-կնոջ» հարճերի շարքը դասել և թաղուհի հռչակել իր աղջկան: Իսկ Հուկկանան լոկ ունկնդրողի դերում է, հրահանգներ ստացողի ենթակայ ու հնազանդ վիճակում: Ինչքան էլ Ադոնցը ջանում է հակառակորդներին տեսել «հաւասարը՝ հաւասարի» դիրքերում, այնուամենայնիւ չի կարողանում չխոստովանել իր եզրակացութեան մէջ, թէ «Հայասա-Ագի մի քաղաւորութիւն էր, որ գտնուում էր Հիբիքների քաղաքական ազդեցութեան տակ» (ընդգծումը մերն է — Գ. Հ.): Այս տեսակէտից լրիւ համամիտ ենք պատմա-

⁶ Այս դաշնագիրը Հաբեան լեզուով ամենափինն է համարում:

դէտ Քասունիի հետ, որ աւելի անկողմնակալ ոգով դրում է. «Երկու թագաւորութիւններուն միջև կնքուած դաշնագրի կէտերէն կ'երևի որ ինչքան նպատաւոր էին Սուլայիլուլիումի համար և ինչքան նուաստացուցիչ Հուկկանայի համար»:

Գաշնագրի մէջ նշուած «գերիներ»ի հարցը երբեք պէտք չէ թիւրիմացութեան մատնի մեղ: Երբեք մենք այստեղ հիմք չունենք «գերիներ»ին հասկընալու որպէս պարտուած երկրից գերեւարուած մարդիկ: Ժամանակի սովորութիւն էր, որ ասպատակող ցեղեր իրենց առաջխաղացի կամ թէ նահանջի ընթացքում իրեղէն կողոպուտի հետ նաև մարդկանց գերեւարէին ու ոչխարների հօտի նման տանէին: Հայասացիների պարբերական ապստամբութիւնները նման էին այս կարգի ասպատակութիւններին, ինչպէս տեսանք: Այսպէս, ինչպէ՞ս կարող էր պարտուած մի երկիր յաղթական մի պետութեան մարդկանց գերեւարել: Հարցը պարզապէս մարդկանց յափշտակելու մասին է: Մի սովորութիւն, որ չափազանց ընդուն էր տոհմա-ստրկատիրական ժամանակաշրջանի համար: Ու գերեւարութեան հարցը միշտ էլ պիտի շարունակէր ուժի մէջ մընայ այնքան ժամանակ, որքան պարբերական ապստամբութիւններ պիտի խոսովէին տիրող և հպատակ ցեղերի յարաբերութիւնները:

Այնուհետև, տեսնում ենք, որ Հաթերի և Հայասացիների հետագայ յարաբերութիւնների պատմութիւնը իր շարունակութեան մէջ մի ուրիշ պատկեր չի ներկայացնում: Սուլայիլուլիումին յաջորդում է նրա որդին՝ Առնաունդան (1355ին (մ.թ.ա.), իսկ Հայասացի Հուկկանա թագաւորին՝ Ազգի երկրից Աննիյաս (1355-1348 մ.թ.ա.): Այս թագաւորների ժամանակ, ոմանք կարծում են թէ ուժերի յարաբերութիւնը փոխւում է: Բայց դա նոյնպէս սխալ է, և երբեք չի եղել, որ Հայասան ուժերի կշռի վրայ հաստատուէր Արեւմտեան մեծ կայսրութեան: Պարզապէս խնդիրը այն էր, որ Առնաունդան իր հօր համեմատութեամբ տկար ու նուազ ընդունակ մէկն էր, իսկ նրա դիմաց Աննիյաս քաւական ձեռներէց և համարձակ թագաւոր դուրս եկաւ: Արդարև, Աննիյաս կարճ ժամանակում ձեռք առաւ Հայասացի պետութեան ամբողջ իշխանութիւնը և Հաթերի հպատակ մի շարք ցեղերի հետ (Միտանի, Իշուվա, Արգավա, Կիզզուադնա և Գասգա) ապստամբուեց, օգտուելով Առնաունդայի թուլութիւնից: Նկատելի է, որ ցեղերի սկսած այդ կռիւները տեղական բնոյթի ապստամբական շարժումներ էին և ոչ միացեալ ճակատով կազմակերպուած աղատադրական պատերազմ: Երեւում է, որ շարժման թեւ տուող կենտրոնական դէմքը Հայասացի թագաւորն է: Աննիյաս մի քանի յաջող արշաւանքներ է կատարում և առաջանում է մինչև Հաթեան երկրի խորքերը ու բազմաթիւ գերիներ վերցրած վերադառնում իր երկիրը: Պէտք է շեշտել սակայն, որ ցեղերի այս ապստամբութեան ու Հայասացի թագաւորին ոգևորութեան թեւ տուող շատ մաս հանդամանքներ էին առաջացել Հաթերի երկրում, քան նրանց թագաւորի անձնական թուլութիւնն էր: Առնաունդայի թագաւորութեան առաջին իսկ տարիներում Եգիպտոսից եկած մի սոսկալի ժանտախտ մուտք էր գործել Փոքր Ասիա, ներթափանցել Հաթեան բանակների շարքերը և սկսել էր ահաւոր նախճիրներ գործել Հաթեան երկրի կենտրոնական վայրերում: Այդ համաճարակին զոհ էին գնացել, ենթադրւում է, Սուլայիլուլիումին, եւ նոյնպէս 6-7 տարի (1355-1348) կարճ թագաւորութիւնից յետոյ զոհ էր գնալու Առնաունդան: Նուաճուած երկրների ու ցեղերի համար սրանից աւելի ձեռնտու պայմաններ չէին կարող գտնուել ապստամբուելու: Հետևաբար նրանք սեփական հզօրութեան չնորհիւ չէ, որ ոտի էին ելել:

Ժանտախտը թէև քսան տարի տևում է, բայց Հաթերի քաղաքական դրութիւնը սկսում է բարեփոխուել, երբ Առնաունդային յաջորդում է նրա կրտսեր եղբայրը՝ Մուրչիլ Բ. (1348)։ Ի հարկէ Մուրչիլ անմիջապէս չէ, որ կարողանում է ապստամբներին զսպել և Հայասացիների դասը տալ։ Երևում է, որ Ժանտախտի աւերները դարձանելու և ապստամբներին սանձահարելու գործը նրանից բաւական ժամանակ է խլում։ Պատմութեան մանրամասնութիւնները հաղորդում են, որ Մուրչիլ սկզբում ցանկանում է Հայասացիների հետ խաղաղութեամբ վերջացնել գործը և Աննիյասից ետ ստանալ նրա յախտակած դերիններին։ Աննիյաս խօսք տալիս է, բայց եւ դրժում։ Նա սկսում է խորամանկել և իր տուած խոստումը ձգձգել։ Անշուշտ, նա քաջալերում էր Մուրչիլի ծանր դրութեամբ՝ մի կողմից Ժանտախտը, միւս կողմից ցեղերի ապստամբութիւն։ Բայց երբ գալիս ու հասնում է իր թագաւորութեան 10րդ տարին, Մուրչիլը իր նշանաւոր հրամանատար Նուադայի հետ մի այնպիսի յաղթական յարձակում է կատարում Հայասացիների վրայ, որ մի թափով մտնում ու առաջանում է մինչև Վանայ ծովի ափերը։ Մուրչիլի և նրա զօրքերի հրամանատար Նուադայի այս յարձակումից Հայասացիները այնպիսի ջախջախիչ հարուած են կրում, որ ընկնում են և այնուհետև չեն կարողանում ոտի կանգնել։ Աննիյաս մահանում է այս պատերազմում (ոմանք Հայասացիների մէջ ծագած ապստամբութեան զոհ են համարում), և այլևս երկրի իշխանութեան մի ներկայացուցչական մարմին չի մնում, որի հետ Մուրչիլ կարողանար հաշտութիւն կնքել։ Ոմանք ասում են, որ Մուրչիլ այդ հաշտութիւնը կնքել է Հայասացիների ադնուականութեան հետ, որից յետոյ Հայասան դառնում է Հաթեան կայսրութեան հարկատու և յատուկ մի սատրապութիւն։

Արդ, տեսնում ենք, որ պատմաբանները ինչպիսի՜ բացատրութիւն էլ տան, առարկայական իրականութիւնը վկայում է մեզ, որ Հայասացիները Հիթիթների ախրապետութեան տակ ապրած կիսանկախ ժողովուրդ են եղել և քաղաքականութեամբ ու քաղաքակրթութեամբ նրանց ազդեցութեան ենթակա։ Ուշադրաւ է, որ այս պետութիւնը երևում ու անհետանում է Հիթիթական կայսրութեան հետ միաժամանակ։ Այսինքն՝ երբ 12րդ դարում (մ.թ.ա.) կործանում է Հաթեան կայսրութիւնը, ընդհատում են նաև Հայասացիներին վերաբերող տեղեկութիւնները։

12րդ դարում ստեղծւում է ցեղերի և ազգութիւնների խառնաշփոթութեան և թոհուրոհի մի քառսային ժամանակաշրջան։ Եւրոպայից դաշխած Թրակիա-փոնդական ցեղեր, որոնք կոչւում էին նաև «Մովաժողովուրդներ» (= պելասգներ), որպէս հնդեւրոպական ժողովուրդների մի հոսանք, սկսում են արշաւանքների։ Նրանք մտել էին Փոքր Ասիա և տեղական թագաւորութիւններն ու իշխանութիւնները կործանելով, գրաւելով առաջանում էին։ Հնդեւրոպական ժողովուրդների այս արշաւանքները շուրջ 1200 թուականներին (մ.թ.ա.) վերիվայր շրջնելով Փոքր Ասիան՝ բռնեց զրոհներով կործանում են նաև Հիթիթական կայսրութիւնը Փոքր Ասիայի կենտրոնում և առաջանում գէպի հայկական բարձրաժանդակի սահմանները։

Ուրեմն, ի՞նչ եղբակացութիւն ենք հանում Հայասայի և Հայասացիների այս համառոտ ուրուագծերից։

— Հայասացիները եղել են ցեղային մի միութիւն հայկական բարձրաժանդակում ապրող բազմաթիւ ցեղերի մէջ։ Նրանք ունեցել են 100 կամ 150 տարուայ մի կեանք, քաղաքականապէս կիսանկախ և հպատակ Հաթեան մեծ կայսրութեան և ապա անհետացել են առանց պատմութեան ու քաղաքակրթութեան յիշատակելի հետքեր թողնելու։

Ադոնցը, յայտնելուց յետոյ, որ Հայաստան-Ազգի թագաւորութիւնը գտնուել է Հիթիթներէ քաղաքական ազդեցութեան տակ, միաժամանակ չի կարողանում չյիշել նրա «սերտ կապուածութիւնը» Հիթիթական աշխարհի հետ: «Մի սարսափելի աղէտ տակնուվրայ արեց քաղաքակիրթ աշխարհը և փոխեց պատմութեան ընթացքը: Մեծ Հատտին կրեց մի սոսկալի ցնցում ու ընկաւ աւերակների տակ 1200ին: Հայաստանի քաղաւորութիւնը և մի քանի ուրիշներ, որոնք սերտօրէն կապուած էին Հիթիթական աշխարհի հետ՝ հաւասարապէս անհետացան» (ընդգծումը մերն է — Գ. Հ.):

Արդ, նկատի ունենալով Հիթիթների և Հայասացիների այս «սերտ կապը», առաջինների «քաղաքական ազդեցութիւնը» վերջիններիս վրայ, նրանց հնդեւրոպական միւսնոյն ծագումը, լեզուների հնդեւրոպական սերումը, ցեղանունների բառարմատական վերջաւորութիւնը, արդեօ՞ք չափազանց դայթակղեցուցիչ հանգամանք չի ներկայացնում Հ. Տաշեանի այն տեսութիւնը, ըստ որի, Հայասացիները կարող էին Հիթիթներից սերած ցեղակից կամ ազգակից ճիւղեր լինել: Տեղ-Ամառնայի և Բողազքէօյի պեղումներից երևան հանուած Հաթերի արխիւները ութ լեզուներով են (բարբառներով): Ինչօ՞ւ համար Հայասացիները Հաթեան հսկայ կայսրութեան մէջ Հաթերին ցեղակից մի ճիւղ չըլինէին: Այս տեսակէտից, շատ իրաւամբ՝ Հ. Տաշեան առաջարկում է Հայ (ասս) բառի և Հատտի (Hatti) բառի միջև օրինաչափ ձայնափոխութիւն տեսնել (Համդէտ Ամսօրեայ, 1934, թիւ 28-29): Այս տեսակէտից Գերմանացի Ենսենի կատարած աշխատանքը ամբողջովին էլ անտեսման արժանի փորձ է: Հաթերի ուլուսնափրութեան հարցում նա բաւական ճիշդ ուղիով ընթացաւ: Եթէ նա Հատտերին փոխանակ Արմէնների նախահայր համարելու, աշխատէր Հատտերի և Հայասացիների առնչութիւնները լուսաբանել, մեր կարծիքով, աւելի ընդունելութիւն կը գտնէր այսօր զիտական աշխարհում:

ԳԵՈՐԳ ՀԱՏԻՏԵԱՆ

(Շար. 2)

